ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"31" հունվարի 2013թ. № 10-Ա

«ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԷՌՆԱ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի բ/ և դ/ կետերի դրույթներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ.Մարգարյանի 31.01.2013 զեկուցագրի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Էռնա Բարխուդարյանի կողմից կազմակերպության կանոնադրությամբ վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու, ուսումնական գործընթացի սահմանված կարգը խախտելու համար՝ կիրառել կարգապահական պատասխանատվություն <<խիստ նկատողություն>> տույժը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագիրը և տնօրենի պաշտոնակատարի բացատրությունը:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ. հունվարի 31
ք. Կապան